



ՀԱՅԱՍՏԱՆ
ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ
ՀԻՄՆԱԴՐԱՄ
ՏԱՐԵԿԱՆ ՀԱԾՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
2010



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ


	ՀՈԳԱԲԱՐՁՈՒՆԵՐԻ ԽՈՐՀՈՒՐԴ	3-8
	ՀՀ Նախագահ Սերժ Սարգսյանի խոսքը	4
	ԼՂՀ Նախագահ Բակո Սահակյանի խոսքը	6
	Հոգաբարձուների անվանացանկ	8
	ԾՐԱԳՐԱՅԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ	9-38
	Գործադիր տնօրեն Արա Վարդանյանի խոսքը	10
	ԿՐԹԱԿԱՆ ՈԼՈՐՏ	12-19
	Արցախ	12
	Հայաստան	17
	ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ	20-25
	Հայաստան	20
	Արցախ	25
	ՄԵՐ ԾՈՒՇԻՆ	26-29
	ՋՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՈՒՄ	30-33
	Արցախ	30
	Հայաստան	32
	ԳՅՈՒՂԵՐԻ ԶԱՐԳԱՅՈՒՄ	34-35
	Հայաստան	34
	ՆԱԽԱԳԱՀԻ ՄՐՑԱՆԱԿ	36
	ԴՐԱՄԱՀԱՎԱՔ 2010	37-38
	ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ	39-56
	Հաշվեքննիչ եզրակացություն	40
	Տարեկան հաշվապահական հաշվեկշիռ	41
	Մասնակցություն ըստ երկրների	42
	ԴՊՐՈՑԱՇԻՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿԱՀԱՎՈՐՈՒՄ	44-47
	Հայաստան	44
	Արցախ	46
	ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ	48
	Հայաստան	48
	Արցախ	49
	ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐ	50
	ՋՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՈՒՄ	51
	ՍՈՑԻԱԼԱԿԱՆ, ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԵՎ ԱՅԼ ԾՐԱԳՐԵՐ	52
	Հայաստան	52
	Արցախ	55
	Նպաստներ ազատամարտիկների ընտանիքներին	56
	ՈՍԿԵ ՄԱՏՅԱՆ	57-59





ՀՈԳԱԲԱՐՁՈՒՆԵՐԻ ԽՈՐՀՈՒՐԴ





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ ՍԵՐԺ ՍԱՐԳՍՅԱՆԻ ԽՈՍՔԸ

2010 թվականը վերահաստատեց, որ «Հայաստան» Համահայկական Հիմնադրամը շարունակում է իրականացնել իր բացառիկ առաքելությունը, շարունակում է վայելել բարձր հեղինակություն մեր ժողովրդի բոլոր խավերի ու բոլոր հատվածների մոտ: Այս վստահությունը նա վաստակել է անխնջ աշխատանքով, ինչպես նաեւ՝ իրականացված ծրագրերի ծավալով ու որակով:

2010 թվականը տնտեսական առումով ամենահաջողներից չէր ո՛չ Հայաստանի, ո՛չ աշխարհի համար, բայց, այդուհանդերձ, Հիմնադրամին հաջողվեց չխախտել ավանդույթը եւ սահմանել դրամահավաքի նոր՝ ավելի բարձր նշաձող: Սա ողջ հայության, միաժամանակ նաեւ «Հայաստան» Հիմնադրամի արժանիքն է:

2010-ին իրականացված եւ իրականացվող ծրագրերը մեր ժողովրդի համար ունեն կենսական ու ռազմավարական նշանակություն: Սրանք պարզ խոսքեր չեն: Այս բառերի թիկունքում հազարավոր մարդկանց ճակատագրեր են, որոնք վաղն ապրելու են ավելի լավ, քան այսօր, վաղն ունենալու են կենցաղի ավելի բարձր որակ, քան ունեն այսօր:

Փաստենք, որ հայության միասնական նպատակներն ունեն իրականացման արդյունավետ մեխանիզմներ, եւ դրանցում հատկապես առանձնանում է «Հայաստան» Համահայկական Հիմնադրամն իր ընդգրկմամբ եւ աշխատանքի արդիական մեթոդներով: Կրկին արժեւորելով այդ բարդ ու պատվաբեր գործունեությունը՝ հիշենք, որ Հիմնադրամի հաջողությունը յուրաքանչյուր հայի հաջողությունն է՝ անկախ այն փաստից, թե որտեղ է նա բնակվում՝ սահմանամերձ գյուղում, թե հեռավոր արտերկրում:






ԱՐՅԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ ԲԱԿՈ ՍԱՀԱԿՅԱՆԻ ԽՈՍՔԸ

«Հայաստան» Համահայկական Հիմնադրամն իր ստեղծման օրից հետապնդում էր մեկ նպատակ՝ համախմբել մեր աշխարհասփյուռ ժողովրդին՝ ի նպաստ Մայր Հայաստանի եւ Արցախի բարգավաճման: Այն հնարավորություն ստեղծեց յուրաքանչյուր հայի համար մասնակցելու ավերիչ երկրաշարժի ու պատերազմի վերքերը բուժելու եւ հայրենիքի վերականգնման վեհ գործին: Տարիներ շարունակ մեր քույրերի ու եղբայրների ջանքերով հայկական երկու հանրապետություններում կառուցվում ու վերականգնվում են կրթության ու մշակույթի օջախները, բուժփմնարկներն ու արտադրական ենթակառուցվածքները, օրեցօր բարելավվում են մարդկանց կենսապայմանները: Ամենամյա դրամահավաքի ժամանակ հանգանակված յուրաքանչյուր լուման ծառայում է ժողովրդի բարեկեցության բարձրացմանն ու մեր պատմական հայրենիքի հզորացմանը:

Ինչպես գիտեք, «Հեռուստամարաթոն-2010-ը» նվիրված էր Արցախի առջեւ ծառացած կարեւորագույն խնդիրներից մեկի՝ խմելու ջրի հարցի լուծմանը: Այն ունի ռազմավարական նշանակություն եւ մեծ ազդեցություն կունենա թե սոցիալական, թե տնտեսական եւ թե քաղաքական տեսանկյունից:

Միայն այսպես, միասնական ուժերով ու համախմբված, շարունակաբար ամրապնդելով Հայաստան-Արցախ-Սփյուռք եռամիասնությունը՝ մենք կկարողանանք քայլ առ քայլ իրականացնել համազգային ծրագրերն ու մեր ժողովրդի դարավոր երազանքները եւ անպայման կարծանագրենք նոր փայլուն հաղթանակներ:

Ես մեծագույն հաջողություն եմ մաղթում բոլոր հայերին՝ Հայաստանում, Արցախում եւ Սփյուռքում: Եղեք առողջ ու երջանիկ: Ամենայն բարիք ձեզ:



ՀԱՅԱՍՏԱՆ ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՀՈԳԱԲԱՐՁՈՒՆԵՐԻ ԽՈՐՀՈՒՐԴ

Սերժ Սարգսյան

Ռոբերտ Քոչարյան

Արկարի Դուկասյան

Գագիկ Հարությունյան

Հովիկ Աբրահամյան

Տիգրան Սարգսյան

Էդվարդ Նալբանդյան

Վաչե Գաբրիելյան

Հրանուշ Հակոբյան

Արթուր Զավադյան

Բակո Սահակյան

Արայիկ Հարությունյան

Ն.Ս.Օ.Տ.Տ Գարեգին Բ

Ն.Ս.Օ.Տ.Տ Արամ Ա

Ներսես Պետրոս ԺԹ Թարմունի

Վերապատվելի Ռընե Լևոնյան

Մայք Խարափյան

Վաղարշ Էիրամճեան

Արա Բոյաջյան

ՀՀ Նախագահ,
հոգաբարձուների խորհրդի
նախագահ

ՀՀ պաշտոնաթող նախագահ
ԼՂՀ պաշտոնաթող նախագահ,
հոգաբարձուների խորհրդի
փոխնախագահ

ՀՀ սահմանադրական դատարանի
նախագահ,
հոգաբարձուների խորհրդի
փոխնախագահ

ՀՀ Ազգային ժողովի նախագահ

ՀՀ վարչապետ

ՀՀ արտաքին գործերի նախարար

ՀՀ ֆինանսների նախարար

ՀՀ սփյուռքի նախարար

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ

ԼՂՀ Նախագահ

ԼՂՀ վարչապետ

Ամենայն Հայոց Կաթողիկոս

Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոս

Հայ Կաթողիկե եկեղեցու

Կաթողիկոս-Պատրիարք

Հայ Ավետարանական եկեղեցի

Ռամկավար-ազատական

կուսակցություն

Հայ հեղափոխական դաշնակցություն

Ս. Դ. հնչակյան

կուսակցություն

Հրայր Հովնանյան

Պերճ Սեդրակյան

Հասմիկ Տերտեռյան

Արսեն Ղազարյան

Վարդան Գրիգորյան

Ալբերտ Բոյաջյան

Մարկ Կիրակոս

Էդուարդո Էռնեսկյան

Էդուարդո Սեֆերյան

Տիրուհի Պուրմայան

Ալբերտ Պողոսյան

Տիգրան Իզմիրլյան

Վաչե Մանուկյան

Շառլ Ազնավուր

Պետրոս Թերզյան

Սամվել Կարապետյան

Ամերիկայի հայկական համագումար

Հայկական բարեգործական

ընդհանուր միություն

Հայ օգնության միություն

Հայաստանի արդյունաբերողների և
գործարարների (գործատուների)
միություն

Ամերիկայի Միացյալ Նահանգներ

Ամերիկայի Միացյալ Նահանգներ

Ամերիկայի Միացյալ Նահանգներ

Արգենտինա

Արգենտինա

Բրազիլիա

Շվեյցարիա

Շվեյցարիա

Մեծ Բրիտանիա

Ֆրանսիա

Ֆրանսիա

Ռուսաստան

Վերստուգիչ հանձնաժողով

Վահե Զազմատարեան

Գագիկ Խաչատրյան

Ֆրանսիա

ՀՀ կառավարությանն առընթեր
պետական եկամուտների կոմիտեի
նախագահ



ԾՐԱԳՐԱՅԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ





ՀԻՄՆԱԴՐԱՄԸ ՀԱՅ ՄԱՐԴՈՒ ԵՒ ՀԱՅՐԵՆԻՔԻ ՀՈԳԵՒՈՐ ԿԱՊԸ Է ԱՄՐԱՑՆՈՒՄ

Արդեն ավելի քան յոթ տարի աշխատում եմ «Հայաստան» Համահայկական Հիմնադրամում՝ զբաղեցնելով տարբեր պաշտոններ, բայց այն ինձ համար երբեք չի եղել սոսկ աշխատավայր, կամ պարզ մի օդակ՝ պետական ու հասարակական կառավարման հիմնարկների շղթայի մեջ:

«Հայաստան» Համահայկական Հիմնադրամն ունի առաքելություն: Ուղղամիտ այս հայտարարությանը կարելի է հակադարձել հարցով. «Իսկ ի՞նչ է, նախարարությունները, գերատեսչությունները, հասարակական կազմակերպությունները չունեն»:

Անշուշտ ունեն եւ շատ կարելու: Բայց «Հայաստան» Հիմնադրամի առաքելությունը բացառիկ է:

Դրանում համոզվում ես, երբ հետետղականորեն քննում ես բարոյական եւ հոգեկան այն շերտերը, որոնք թաքնված են ծրագրեր նախաձեռնող, ծրագրեր իրականացնող այս հաստատության շապիկի տակ:

Ի՞նչ է բարեգործությունը: Ի՞նչ է նվիրատվությունը: Ինչո՞ւ են մարդիկ անում մեծ կամ փոքր զոհողություններ: Ի՞նչն է նրանց մղում այդ բանն անելու՝ զգացմո՞ւնքը, գաղափա՞րը, սովորո՞ւյթը, թե՞ գուցե երեքը միասին:

Բոլոր դեպքերում «Հայաստան» Համահայկական Հիմնադրամը կոչված է սպասարկելու այն մարդկանց, ովքեր Հայաստանի եւ Արցախի հետ իրենց կապը հյուսում են բարեգործությամբ եւ անձնական զոհողությամբ:

Կարող է տարօրինակ թվալ, բայց պատերազմի ու տնտեսական ճգնաժամի տարիներին շատ ավելի հեշտ էր նվիրատուների հետ աշխատելը, որովհետեւ Արցախի եւ Հայաստանի այն ժամանակվա իրավիճակը հապաղելու տեղ չէր թողնում՝ կարիքն էլ, օգնություն ստանալու անհրաժեշտությունն էլ ակնհայտ էին:

Այսուհանդերձ պետք է արժանին մատուցել «Հայաստան» Հիմնադրամի նախկին ղեկավարներին, ովքեր դժվարին այդ ժամանակներում նվիրատվություններն ընդունելուն եւ ուղղորդելուն զուգահեռ՝ ստեղծեցին կառավարման եւ հաշվետվության թափանցիկ մեխանիզմներ:

1993-ին արդեն անցկացվում էին շինարարի ընտրության մրցույթներ: 1994-ին առաջին անգամ հրավիրվեց միջազգային հաշվեքննություն: Երկուսն էլ՝ նորություն էին ոչ միայն Հիմնադրամում, այլեւ Հայաստանում՝ առհասարակ:

Բայց միայն կառավարման արդյունավետ մեխանիզմներն ու թափանցիկ



հաշվետվությունը բավարար չէին հարյուր հազարավոր նվիրատուների հետ աշխատելու համար: Պատերազմի ավարտի եւ տնտեսական ճգնաժամի հաղթահարման հետ փոխվում էին նաեւ կարիքի գնահատման չափանիշներն ու ծրագրերի բնույթը:

Եթե առաջ հարկ չկար բացատրելու, թե ինչու է իրականացվում, ասենք, «Ձմեռ: Վառելիք եւ ջեռուցում»- ծրագիրը, խաղաղ պայմաններում պետք էր հիմնավորել առաջարկների նպատակահարմարությունը, պետք էր ներկայացնել Հիմնադրամի եւ կառավարությունների պատասխանատվության համամասնությունը:

Չեմ կարող շրջանցել այն փաստը, որ ԼՂՀ կառավարությունը եւ Հայաստանի մարզային իշխանությունները մեծ ներդրում են ունեցել եւ ունեն ծրագրային քաղաքականության ձեւավորման գործում: Չեմ կարող չխոսել այն համագործակցության մասին, որն արդեն ավանդույթ է դարձել:

Գնալով աճում է ԼՂՀ կառավարության համաֆինանսավորմամբ իրականացվող ծրագրերի թիվը: Նման միտում նկատվում է նաեւ Հայաստանի մարզերում:

Հիմնադրամի ծնունդն ու տարիք առնելը համընթաց մի ժամանակահատվածի հետ, երբ ամբողջ աշխարհում բուռն կերպով զարգացում էին ապրում տեղեկատվական տեխնոլոգիաները: Դյուրացավ, ավելի մատչելի դարձավ իրազեկման ու հաշվետվության գործը: Այսօր ցանկացած նվիրատու՝ որտեղ էլ լինի, կայքի միջոցով կարող է ծանոթանալ մեր ծրագրերին:

Կարող է տեսնել իրագործումների ընթացքը ներկայացնող լուսանկարներ եւ տեսանյութեր: Արդեն երեք տարի արբանյակային հեռուստաալիքները հեռարձակում են «Ձեռք ձեռքի» հաղորդաշարը, որն ամեն ամիս զեկուցում է Լեոնային Ղարաբաղում եւ Հայաստանում իրականացվող մեր ծրագրերի մասին:

Տեղեկատվական տեխնոլոգիաների դերն այսքանով չի սահմանափակվում: Վերջին տարիներին դրանք հաջողությամբ կիրառվում են նաեւ դրամահավաքի կազմակերպման գործում: Հատկապես Հայաստանում անգնահատելի ծառայություններ են մատուցում հեռախոսային օպերատորները՝ SMS-ով ընդունելով հազարավոր նվիրատվություններ:

Այս ամենով պետք է փաստել, որ «Հայաստան» Համահայկական Հիմնադրամն անցած 19 տարում ապացուցել է իր կենսունակությունը՝ հաղթահարելով պատերազմի եւ տնտեսական ճգնաժամի դժվարությունները, զերծ մնալով քաղաքական խնդիրների ազդեցությունից:

Դրա ցուցիչն նվիրատուների տարեցտարի աճող թիվն է եւ այն դպրոցները, հիվանդանոցները, ճանապարհներն ու ջրագծերն են, որոնք Ղարաբաղի եւ Հայաստանի քաղաքացիների կյանքը բարելավելուց բացի՝ նաեւ ամրացնում են հայ մարդու եւ Հայրենիքի հոգետը կապը:





ԱՄԷԼԱՄԵԾԸ

Ստեփանակերտի N11 դպրոց

2010 թվականի սեպտեմբերի 2-ին՝ Լեոնային Ղարաբաղի Հանրապետության անկախության օրը, Ստեփանակերտում մեծ հանդիսավորությամբ բացվեց քաղաքի N 11 դպրոցի նորակառույց շենքը, որն առանձնանում է ճարտարապետական լուծումով, իսկ մակերեսով ամենամեծն է Հիմնադրամի մինչ այս կառուցած բոլոր դպրոցներից:

Շենքը կառուցվել է ամերիկահայ բարերար Զերալո Թրփանջյանի նվիրատվությամբ եւ Լեոնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության համատեղ ֆինանսավորմամբ:

Եռահարկ ուսումնական մասնաշենքը, երկհարկանի վարչական բաժինն ու մարզադահլիճը կազմում են միասնական մի համալիր, որպիսին ոչ միայն Ղարաբաղում, այլեւ Հայաստանում չկա: Լայն միջանցքներ, լուսավոր ու մաքուր դասարաններ, կաբինետներ եւ լաբորատորիաներ... Այս ամենը ուսումնական գործընթացը պատշաճ կերպով կազմակերպելու հնարավորություն է տալիս: Պատշաճ կազմակերպումն էլ դպրոցի ավելի քան 350 աշակերտների համար գրավիչ է դարձնում կրթությունը:

Ստեղծված օրվանից դպրոցը զբաղեցրել է մանկապարտեզի հին շենքի տարածքը: Աշակերտներն ու ուսուցիչները տարիներ շարունակ երազել են այսպիսի պայմաններ եւ, լսելով Համահայկական Հիմնադրամի ծրագրերի մասին՝ հուսացել, որ հերթը մի օր իրենց էլ է հասնելու:

«Սպասել ենք անհամբեր, որ աշխատենք ու սովորենք լուսավոր դասասենյակներում, ունենանք ժամանակակից պայմաններ».

ասում է ուսուցչուհի Արմենուհի Խանումյանը: Նոր դպրոցը նրա համար աշխատանքային բարենպաստ միջավայր լինելուց զատ՝ նաեւ ազգային միասնության վառ ապացույց է:

Բացման արարողության ժամանակ նույն զգացողությունն ուներ եւ նույն միտքն էր արտահայտում «Հայաստան» Համահայկական Հիմնադրամի ԱՄՆ Արեւմտյան շրջանի տեղական մարմնի ատենապետ Արա Ագիշյանը.

«Մենք սկանալաւ ենք եւս մեկ հաջողության, որը փաստում է Հայաստան, Արցախ, Սփյուռք երրորդության զորությունը: Դպրոց թե՛ ձանապարհ, ջրագիծ թե՛ հիվանդանոց. հաստատում են մարտահրավերները դիմագրավելու միասնական մեր կամքը»:





ԱՄԵՆԱԿԱՐԵՒՈՐԸ

Տողի արվեստի դպրոց

Ստեփանակերտի N11 դպրոցի փոխտնօրեն Ծովինար Գրիգորյանի կարծիքով դպրոցի նոր շենք կառուցելը ոչ թե բարեգործական ծրագիր է, այլ հայրենասիրության դրսևորում: Փոխտնօրենն իր, գործընկերների, աշակերտների եւ նրանց ծնողների անունից շնորհակալություն է հայտնում այդ հայրենասիրության համար:

«Մեր երախտագիտությունն ենք հայտնում նրանց, ովքեր մոտակողմած են Արցախի բնակչի, Արցախում այսօր ապրող երեխայի հոգսերով եւ Արցախի ապագայով»:



Երկու տարի առաջ հանդիսավոր պայմաններում շահագործման հանձնվեց Հաղորդի շրջանի Տող գյուղի դպրոցի շենքը, որը հիմնովին նորոգվել էր ԱՄՆ Արեւմտյան շրջանի հայության նվիրատվություններով: Միաժամանակ «Հայաստան» Համահայկական Հիմադրամը սկսեց նորոգել դպրոցի երկրորդ մասնաշենքը, որտեղ գործելու է արվեստի դպրոց:

Հինգ տարի առաջ ստեղծված արվեստի դպրոցում երաժշտություն, թատրոն, կերպարվեստ են սովորում Տողի ու հարեան վեց գյուղերի շնորհալի երեխաները:

Գյուղապետ Ալեքսանդր Ծաբոյանն ասում է, որ հիմնանորոգված մասնաշենքը համայնքի բնակիչների համար ժամանակավորապես ծառայելու է որպես ակումբ եւ մարզական կենտրոն, քանի որ գյուղն առայժմ զուրկ է այդ հարմարություններից:



ԱՄԵԱՀՐԱՏԱՊԸ

Վաղուհասի դպրոց

Լեոնային Ղարաբաղի Մարտակերտի շրջանի Վաղուհաս գյուղն առաջին անգամ չի հիշատակվում «Հայաստան» Համահայկական Հիմնադրամի հաշվետվություններում: Պատերազմից հետո Հիմնադրամի Արգենտինայի տեղական մարմնի ֆինանսավորմամբ վերականգնվեցին գյուղի՝ ռազմական գործողությունների հետեանքով ավերված տներից 67-ը: 90-ականների վերջում կառուցվեց դպրոցական շենք, որն այսօր արդեն չի բավարարում վաղուհասացիներին:

Վաղուհասն ունի 187 տուն, 680 բնակիչ: Գյուղում կա նախադպրոցական տարիքի 85 երեխա, սպասվում է 15 ծնունդ: Համայնքի ղեկավար Գարեգին Ղարախանյանի կարծիքով՝ այս ցուցանիշն ինքնին դպրոցի նոր շենք կառուցելու պատճառ է: Իսկ դպրոցի տնօրեն Դոնարա Գրիգորյանը շենքային պայմանների բարելավումից բացի կարևորում է նաեւ կրթության որակի բարձրացման հարցը:

«Ինձ համար ամենակարևորն այն է, որ նոր շենքում անցնելու ենք ուսուցման կարիներուային համակարգի, ինչն էլ մեծացնելու է մեր աշխատանքի արդյունավետությունը». ասում է տիկին Գրիգորյանը:

Վաղուհասի նոր դպրոցը, որ կառուցվում է հայաստանցի գործարար Սամվել Ալեքսանյանի նվիրատվությամբ եւ Ղարաբաղի կառավարության համատեղ ֆինանսավորմամբ, կունենա երկու մասնաշենք՝ վարչական եւ ուսումնական, որը նախատեսված է 240 աշակերտի համար: Իսկ հին շենքը նորոգումից հետո կծառայի որպես մանկապարտեզ:



ԱՄԵԱՍՊԱՍՎԱԾԸ

Գիշիի դպրոց

Ի տարբերություն Լեոնային Ղարաբաղի այլ բնակավայրերի՝ Մարտունու շրջանի Գիշի գյուղը շատ խնդիրներ չունի: Առաջնահերթն այստեղ դպրոցն է, որի շենքը կառուցվել է անցած դարի երեսնական թվականներին եւ վաղուց արդեն չի համապատասխանում ժամանակակից պահանջներին:

«Այսօր մենք չենք կարողանում բավարարել մեր աշակերտների պահանջները, -ասում է ուսուցչուհի Ադելա Օհանջանյանը: - Որքան էլ ուսուցիչը ջանա, հնարավոր չէ գրատախտակին կալիճով գրելով ուսուցում կազմակերպել: Նոր պայմաններ, նոր տեխնոլոգիաներ են անհրաժեշտ»:

Հայաստանի «Վարդանյանների ընտանիք» հիմնադրամի նվիրատվությամբ եւ Լեոնային Ղարաբաղի կառավարության համատեղ ֆինանսավորմամբ Գիշիում դպրոցի նոր շենք է կառուցվում, որը նախատեսված է 300 աշակերտի համար: Կառուցվող շենքը ոչ միայն հարմարավետություն, այլեւ կրթության կազմակերպման նոր որակ է խոստանում:

«-Դա մեր վաղեմի երազանքն էր, -ասում է Գիշիի դպրոցի տնօրեն Արկադյա Ավանեսյանը: - Ընդհակառակը բոլոր նրանց, ովքեր նախաձեռնել եւ իրականացնում են այս ծրագիրը»:



ԱՄԷՆՀԱՐՄԱՐԸ

Ճարտարի N2 դպրոց

«Հայաստան» Համահայկական Հիմնադրամը Լեոնային Ղարաբաղի Մարտունու շրջանի Ճարտար գյուղում կառուցել է Հովիկ Հարությունյանի անվան N2 դպրոցի նոր շենքը: Ծրագիր, որի իրագործմանը ուսուցիչներն ու աշակերտները սպասել են տասնյոթ տարի, քանի որ 1992 թվականին հրետակոծությունից ավերվել էր գլխավոր մասնաշենքը:

«Երեխաները սովորում էին անհարմար, անշուք պայմաններում,-ասում է դպրոցի տնօրեն Մեսրոպ Արզումանյանը:-Պարապմունքներն անցկացնում էինք երկու հերթով»:

Նոր շենքի կառուցմամբ լուծվել է ոչ միայն ուսումնական գործընթացը կազմակերպելու համար անհրաժեշտ տարածքի հարցը, այլև ստեղծվել են ժամանակակից պայմաններ:

«Մեծ դպրոց է, լավ հարմարություններով,-ասում է փոխտնօրեն Ռուզաննա Բաբայանը:-Եւ դա մեզ տրամադրում է, որպեսզի ամեն ինչ անենք ուսուցումը բարձր մակարդակի վրա պահելու համար»:

Դպրոցն ունի 83 աշակերտ, բայց Ֆրանսիայի հայության ջանքերով կառուցված նոր շենքը նախատեսված է 130-ի համար: Սա բացատրվում է բնակչության աճի միտումով, որն առկա է Ճարտարում: Լուսավոր, հարմարավետ դասարաններից ու կաբինետներից բացի կա նաեւ մարզահրապարակ եւ դահլիճ, ինչը, տնօրեն Մեսրոպ Արզումանյանի կարծիքով, ծառայելու է ամբողջ գյուղին:

«Ընդհանրապես գյուղի համար ոչ միայն դպրոց է կառուցվել, այլ նաեւ կարելի է ասել՝ մշակութային, սպորտային համալիր է կառուցվել, եւ եւս ուզում եմ շնորհակալություն հայտնել նրանց, ովքեր մտածել են մեր մասին եւ օգնել են մեզ»:

ասում է Մեսրոպ Արզումանյանը:



«ՄԻԱՅՈՒՄ» ԿԱԼՁԻ ԱՐՁԱԳԱՆՔԸ

ԿՐԿԻՆ ԴՐԱՆՏԻԿՈՒՄ

Լեոնային Ղարաբաղի Հանրապետության Հաղորդի շրջանի Դրախտիկ գյուղի 430 բնակիչները վերջին մեկ տարում երկու անգամ արժանացել են «Հայաստան» Համահայկական Հիմնադրամի ուշադրությանը: Կառուցվել է «Մեծ Թաղլար-Ազոխ-Դրախտիկ» ջրագիծը, որն Իշխանագետի ջրերը հասցնում է Դրախտիկի բնակիչներին, իսկ անցած տարի սկսվել է գյուղի մանկապարտեզի շինարարությունը:

Գյուղապետ Նորայր Դավթյանը համայնքի համար մեծ ներդրում է համարում ֆրանսահայերի նվիրատվությամբ կառուցվող հիսուն տեղանոց մանկապարտեզը, որի շինարարության ավարտին արդեն սպասում է երեսունհինգ երեխա:

«-Պատերազմից հետո գյուղից ոչ մի երիտասարդ դուրս չի եկել, ջահելներն աչտեղ են, գյուղում ապրում են, գյուղում սերունդ են տալիս, մի խոսքով՝ աճող համայնք է»

-ասում է Նորայր Դավթյանը:

Մի մանկապարտեզ էլ ֆրանսահայերի նվիրատվությամբ եւ Լեոնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության համաֆինանսավորմամբ կառուցվում է Մարտունու շրջանի Ղուզե Ճարտար համայնքում: Մանկապարտեզն ութսուն տեղանոց է, իսկ գյուղում կա նախադպրոցական տարիքի վաթսունհինգ երեխա:

«Վախենամ շուտով նեղվածք լինի, երեխեքը տեղ չանեն»․ ասում է Ղուզե Ճարտարի բնակիչ, մանկապարտեզի շինարարության աշխղեկ Սաշա Գետրգյանն, ով տասը թոռի եւ երկու ծոռի պապ է:

«Դպրոցներն արդեն կառուցել են, էս մանկապարտեզն էլ որ լինի, մարդիկ ավելի ամուր կման գյուղում, գյուղում էլ որ մնացին, թոռ ու ծոռ կունենան, բնակչությունը կշատանա»․ ասում է Գետրգյանը:



Ղուզե Ճարտարի մանկապարտեզն այս տարվանից կգործի՝ դառնալով ազգային միասնության եւս մեկ վկայություն, ինչը, Սաշա Գետրգյանի եւ շատ ղարաբաղցիների կարծիքով՝ 1988-ին հնչած «Միացում» կոչի արձագանքն է: «Էն ժամանակ որ ասել ենք միացում, աշխարհի բոլոր հայերն էլ լսել են ու միացել են: Միացել են, միացած են հիմա, դրա համար էլ էս տեսակ մեծ-մեծ գործեր են լինում»:



ԿՐԹՈՒԹՅՈՒՆ | ՀԱՅԱՍՏԱՆ

ԴՐԱԿԱՆ ԼԻՑԲԵՐ ՀԵՌԱՎՈՐ ԳՅՈՒՂՆՆ

«Եթե գյուղի վիճակը լավ լինի, ամբողջ հանրապետության համար լավ կլինի, քաղաքի համար էլ լավ կլինի, որովհետև երկիրը պահողը գյուղն է».

ասում է Լոռու մարզի Արծնի համայնքի ղեկավար Խնկո Խաչանեսյանը:

Այս գյուղում 80-ականների վերջին բնակություն են հաստատել Ադրբեջանից բռնազաղթած հայեր: Հետագայում համայնքը համալրվել է Վրաստանի հայկական շրջաններից տեղափոխված ընտանիքներով:

Արծնի ուներ հեռավոր սահմանամերձ գյուղերին բնորոշ բոլոր խնդիրները՝ ջուրը սակավ էր, գազ չկար, դպրոցն ու համայնքային կենտրոնը՝ կիսավեր: «-Հուսալքված էինք, թվում էր այնքան հեռու ենք, որ ոչ ոք մեզ չի նկատելու եւ ոչ ոք չի հիշելու մեզ,-մեկ տարի անց ասում էր Արծնիի դպրոցի տնօրեն Մարիետա Ռոստոմյանը: -Բայց, ինչպես տեսնում եք, անսկատ չմնացինք»:

Արծնի ներգրավված էր «Հայաստան» Համահայկական Հիմնադրամի «Գյուղերի զարգացում» ծրագրում: 2009 թվականին Հնդկաստանի կառավարությունը՝ ծանոթանալով այդ ծրագրին, ստանձնեց Լոռու մարզի Արծնի համայնքի դպրոցի վերակառուցման ու նորոգման գործը:

Դպրոցի՝ խորհրդային տարիներին կառուցված շենքը բացի հնությունից եւ անմխիթար վիճակից, ուներ նաեւ կառուցվածքային բազմաթիվ թերություններ, որոնք հաջողվեց վերացնել Հիմնադրամի մասնագետների, նախագծողների եւ շինարարների համագործակցության շնորհիվ:

Հնդկաստանի կառավարությունը դեսպանության միջոցով մշտապես ուշադրության կենտրոնում է պահել Արծնիի դպրոցի նորոգման ծրագիրը:



Շինարարական աշխատանքին հետեւելու համար Արծնի է այցելել Հայաստանում Հնդկաստանի արտակարգ եւ լիազոր դեսպան Աչալ Կումար Մալիոտրան:

-Սա մեր փոքր ներդրումներից մեկն է, որ կատարել ենք գյուղական շրջաններում դպրոցի զարգացման համար -ասել է դեսպանը՝ միաժամանակ նշելով, թե տպավորված է Հայաստանում գրագիտության բարձր մակարդակով:

Դպրոցի տնօրեն Մարիետա Ռոստոմյանի կարծիքով՝ կարելի էր ոչ միայն ստեղծված հարմարություններն ու պայմաններն են, այլեւ այն լիցքերը, որ ստանում են Արծնիի բնակիչները՝ տեսնելով գյուղում կատարված մեծ աշխատանքը:

«Դպրոցը գյուղի համար դարձավ եկեղեցու պես մի բան, հավատ տվեց մարդկանց եւ բարեփոխումների հույս»- ասում է տիկին Ռոստոմյանը:

ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԴՊՐՈՑ

«Հայաստան» Համահայկական Հիմնադրամի Շվեյցարիայի տեղական մարմնի նախաձեռնությամբ եւ հատկացրած միջոցներով հիմնովին նորոգվել, արդիականացվել է Երեւանի Չայկովսկու անվան հանրակրթական երաժշտական դպրոցի ծայնադարանը, որտեղ անցկացվում են երաժշտական գրականություն առարկայի պարապմունքները: Ձայնադարանը համալրվել է ժամանակակից սարքավորումներով եւ աուդիովիզուալ ֆոնդով: Ծրագրի շրջանակում դպրոցը ստացել է նաեւ երաժշտական գործիքներ՝ յոթ ջութակ, երկու ալտ, մեկ թավջութակ, երկու գալարափող եւ երկու հորթյ:



ՆԱԵՒ ՄԱՐԶԱԴԱՀԼԻԾ

Ֆրանսահայ «Հույս Հայաստանի» կազմակերպության նվիրատվությամբ եւ Սպիտակի քաղաքապետարանի համատեղ ֆինանսավորմամբ կառուցվել է Լոռու մարզի Սպիտակ քաղաքի Դանիել Սահակյան անվան N 2 դպրոցի մարզադահլիճը: Դպրոցի ուսումնական մասնաշենքը տասը տարի առաջ կառուցվել է «Հայաստան» Հիմնադրամը՝ դարձյալ «Հույս Հայաստանի» կազմակերպության նվիրատվությամբ:



Թիվ 56 դպրոց

Հիմնադրամի Սիրիայի տեղական մարմինը Երեւանի թիվ 56 դպրոցին նվիրաբերել է համակարգչային գույք եւ արդի տեխնիկա:



ՀՐԱՇԲԻ ՄՊԱՍԵԼԻՍ

«Հայաստան» Համահայկական Հիմնադրամը Մեծ Բրիտանիայի տեղական մարմնի եւ հայաստանյան նվիրատուների հովանավորությամբ հիմնովին նորոգում է Երեւանի Շենգավիթ վարչական շրջանի գիշերօթիկ մսուր-մանկապարտեզը: Իր տեսակով եզակի այս հաստատությունն ունի 140 սան, որոնցից 70-ը սոցիալապես անապահով են, միակողմանի ծնողազուրկ կամ անօթեան: Նրանք սպասարկվում են 24 ժամյա ռեժիմով:

1965 թվականին կառուցված շենքում հիմնանորոգում երբեւէ չէր կատարվել, ինչի հետեանքով շենքը դարձել էր վթարային եւ չէր համապատասխանում նախադպրոցական կրթության պահանջներին:

Հիմնանորոգման արդյունքում մանկապարտեզը նոր տեսք կստանա, իսկ բաց պատշգամբների ապակեպատման եւ ջեռուցման շնորհիվ կընդլայնվի շենքի օգտագործելի հատվածը: Ծրագրի ավարտից հետո մանկապարտեզն իր հարկի տակ կընդունի մինչեւ 200 երեխա:



«-Երբ նորոգումը սկսվեց, մեզ համար լույս բացվեց, արդեն պատրաստ է տանիքը, սանհանգույցներն են նորոգվում, ապակեպատվում են պատշգամբները: Ես հուսով եմ, որ մենք Հիմնադրամից հրաշալի նվեր ենք ստանալու»

-ասում է մանկապարտեզի տնօրեն Լուսինե Մատինյանը:





ՍՐՏԻ ԹԵԼԱԴՐԱՔՈՎ

«Զանգեզուր» սրտաբանական կենտրոն

«Զանգեզուր» սրտաբանական կենտրոնը՝ իբրեւ տարածաշրջանային նախագիծ, նորություն է Հայաստանի առողջապահության ոլորտում: Սյունիքի մարզի Գորիս քաղաքի մերձակայքում գտնվող հաստատությունը սպասարկելու է Հայաստանի հարավային շրջանների եւ Լեռնային Ղարաբաղի սրտանոթային հիվանդություններ ունեցող մարդկանց:

Սրտաբան, Մարսելի «Հայաստան-Ֆրանսիա առողջապահության միության» ներկայացուցիչ Միեր Սուսանիի կարծիքով սրտաբանական կենտրոնի տեղի ընտրությունը ճշգրիտ հաշվարկի արդյունք է:


«Գորիսը հավասար հեռավորության վրա է թե Սյունիքի մարզի մյուս բնակավայրերից, թե Վայոց Ձորի մարզից եւ թե Լեռնային Ղարաբաղից, -ասում է Միեր Սուսանին,- հեռուստաբար այդ շրջանների հիվանդները Երևան հասնելու փոխարեն կարող են տեղում օգնություն ստանալ»:

«Զանգեզուր» սրտաբանական կենտրոնի ստեղծումը Մարսելի «Հայաստան-Ֆրանսիա առողջապահության միության» եւ Հիմնադրամի Ֆրանսիայի տեղական մարմնի նախաձեռնությունն էր: Դրան հետագայում միացան Ֆրանսիայի Բուշ-Դյու-Ռոն նահանգի վարչակազմը, Լիբանանի նախկին վարչապետ Սաադ Հարիրին: Ավելի քան 432 միլիոն դրամ արժողությամբ այս ծրագրին է հատկացվել նաեւ ֆրանսահայ բարերար Գրիգոր Շահինյանի կտակած գումարը: Ծննքն արդեն կանգուն է: «Հայաստան-Ֆրանսիա առողջապահության միության» միջոցներով կենտրոնը կկահավորվի եւ կհամալրվի բուժսարքավորումներով՝ հնարավորություն տալով միաժամանակ սպասարկելու տասնվեց ստացիոնար եւ քսան ամբուլատոր հիվանդի:



Իր գոյության ողջ ընթացքում՝ շուրջ քսան տարի, «Հայաստան» Համահայկական Հիմնադրամը ծանրակշիռ ներդրում է ունեցել Հայաստանի եւ Լեռնային Ղարաբաղի առողջապահության ոլորտներում: Սկսած գյուղական բուժկետերի նորոգումից մինչեւ առողջապահական համալիր կենտրոնների կառուցում, նպատակը եղել է մեկը՝ բարելավել համակարգը, բարձրացնել բուժսպասարկման որակը եւ մարդկանց մեջ սերմանել հարգանք սեփական առողջության նկատմամբ:

Անցած տարում եւս Հիմնադրամի առողջապահական ծրագրերի աշխարհագրությունը բազմազան էր՝ Հայաստանի հարավից մինչեւ հյուսիս-արեւելք կառուցվել եւ նորոգվել են շուրջ տասը բուժօգնություններ:



ՀՈԳՈՒ ԹԵԼԱԴՐԱՆՔՈՎ



ԺԻԼԲԵՐ ՄՈՍՋՅԱՆ, Հիմնադրամի Գերմանիայի տեղական մարմնի ատենապետ-
Այսպիսի ծրագիր հնարավոր էր հաջողել միայն ձեռք-ձեռքի տալով, համահայկական ուժերով: Մեզանից ոչ մեկը միայնակ չէր կարող հասնել ցանկալի արդյունքին:



ԱՎԵՏԻՍ ԿԻԶԻՐՅԱՆ, Հիմնադրամի Շվեյցարիայի տեղական մարմնի ատենապետ-
Միությունը զորություն է, այս ծրագիրն էլ այդ զորության արդյունքն է: Հուսանք, այստեղ շատ կլինեն ծնունդները եւ քիչ՝ հիվանդությունները:

Նոյեմբերյանի հիվանդանոց

Հայաստանի հյուսիս-արեւելքում «Հայաստան» Համահայկական Հիմնադրամը հիմնովին նորոգել է Տավուշի մարզի Նոյեմբերյան քաղաքի հիվանդանոցը, որը սպասարկում է տարածաշրջանի ավելի քան 30 հազար բնակիչ: 317 միլիոն դրամ արժողությամբ այս ծրագիրն իրականացվել է Գերմանիայի, Շվեյցարիայի, Ավստրալիայի եւ Լիբանանի հայության նվիրատվություններով: Գերմանիայի հայ բժիշկների միության աջակցությամբ նորոգ հիվանդանոցը կկահավորվի եւ կհագեցվի անհրաժեշտ սարքավորումներով:

«-Հիմնանորոգումից հետո ամեն ինչ արդիական է եւ համապատասխան այսօրվա պահանջներին,

- ասում է հիվանդանոցի տնօրեն Աշոտ Գյոզալյանը՝ թվարկելով ձեռքբերումները:-

Առաջ վերելակ չկար, հիմա կա, առանձին սանհանգույցներ չկային, հիմա կան, շատ-շատ բաներ են փոխվել»:

Իրականացված ծրագրից գոհ են եւ հիվանդները, եւ բժիշկները եւ Հիմնադրամի տեղական մարմինների ներկայացուցիչները:



ՄԻՐՈ ԹԵԼԱԴՐԱՔՈՎ

Արովյանի ծննդատուն

Երեւանի Սուրբ Աստվածամայր բժշկական կենտրոն

«Հայաստան» Համահայկական Հիմնադրամը՝ մոնրեալցի տեր եւ տիկին Վրեժ եւ Իմաստուհի Նիկողոսյանների նվիրատվությամբ հիմնովին նորոգել է Արովյանի ծննդատան երրորդ հարկը:

Ծննդատունը քսանհինգ տարվա պատմություն ունի: Այդ ընթացքում երբեք չի նորոգվել: Պահպանվել է ընթացիկ հարդարանքի եւ բուժանձնակազմի հոգատարության շնորհիվ:



«Չեմ կարող ասել՝ որքան ժամանակ եւս կմնայինք այս պայմաններում, եթե չլիներ «Հայաստան» Համահայկական Հիմնադրամի ծրագիրը».

ասում է Ծննդատան տնօրեն Լարիսա Մադոյանը:

Հիմնանորոգումից բացի կատարվում են նաեւ կառուցվածքային փոփոխություններ, որոնք նպաստելու են սանիտարահիգիենիկ անվտանգությանը: Տնօրեն Լարիսա Մադոյանն ասում է, որ նախագծված չորս ծնարանները հնարավորություն տվեցին, որ յուրաքանչյուր կին ծննդաբերի առանձին: Ժամանակակից պայմանների ապահովումն արդեն դրական ազդեցություն ունի ծնելիության աճի վրա, ինչը կարելի է համարել ծրագրի կարեւորագույն արդյունքը:

«Հայաստան» Համահայկական Հիմնադրամի Մեծ Բրիտանիայի տեղական մարմնի ֆինանսավորմամբ հիմնովին նորոգվել է Երեւանի սուրբ Աստվածամայր բժշկական կենտրոնի ծննդատան մանկաբարձական բաժանմունքը:

Ծննդատան երկրորդ եւ երրորդ հարկերում նորոգվել է ավելի քան 1300 քառակուսի մետր տարածք: Արդիականացվել են ջրամատակարարման, օդափոխության եւ էլեկտրամուտքման համակարգերը: Հիմնանորոգումից հետո այստեղ հնարավոր կլինի միաժամանակ ընդունել վեց ծնունդ:

Գործող երեք ծնարանների նորոգման ծախսը հոգացել է Լոնդոնի «Անահիտ» միությունը: Վիրահատարանը բարեկարգվել է Հրայր Դեմիրճյանի հիշատակին կատարված նվիրատվությամբ: Ծրագրին աջակցել են նաեւ Լոնդոնի Սուրբ Սարգիս եկեղեցու տիկնանց մարմինը, Թախթա ընտանիքը եւ այլ բարերարներ:

«Խնդրանքս է համայն հայությանը, որ շարունակեն աջակցությունն ու նվիրատվությունները, որպեսզի ապագայում էլ կարողանանք այսպիսի ծրագրեր իրագործել».

բացման արարողության ժամանակ ասել է Մեծ Բրիտանիայի տեղական մարմնի առենայեւտ Արմինե Կարապետին:



Զարենցավանի բժշկական կենտրոնի մանկաբարձական բաժանմունք

«Հայաստան» Համահայկական Հիմնադրամը հիմնովին նորոգում է նաեւ Կոտայքի մարզի Զարենցավան քաղաքի բժշկական կենտրոնի մանկաբարձական բաժանմունքը: Ծրագիրն իրականացվում է Հիմնադրամի Հոլանդիայի տեղական մարմնի, հայաստանցի նվիրատուների եւ հիվանդանոցի տնօրինության համաֆինանսավորմամբ:

Ներքին կառուցվածքային փոփոխություններից, տանիքի նորացումից եւ հարդարման աշխատանքներից հետո բարենպաստ պայմաններ կստեղծվեն մայրերի ու նորածինների համար, կաճի մանկաբարձական բաժանմունքից միաժամանակ օգտվողների թիվը: Բաժանմունքը կունենա նաեւ ջեռուցման կենտրոնացված համակարգ:



ԲՐԱԶԻԼԱՀԱՅԵՐԻ ՆՇԱՆԱԿԵՏԸ

«Նորք» ինֆեկցիոն հիվանդանոց

«Հայաստան» Համահայկական Հիմնադրամն արդեն չորս ծրագիր է իրականացրել «Նորք» հանրապետական ինֆեկցիոն հիվանդանոցում: Զորսն է՝ Բրազիլիայի հայ համայնքի նվիրատվությամբ: Հիմնադրամի եւ բրազիլիայերի այսօրինակ հոգատարությունը հիվանդանոցի տնօրեն, հանրապետության գլխավոր վարակաբան Արա Ասոյանը բացատրում է իր ղեկավարած հաստատության բացառիկությամբ:

«-Սա ինֆեկցիոն հիվանդությունների բուժման միակ կենտրոնն է Հայաստանում, -ասում է նա,- իսկ ինֆեկցիոն հիվանդանոցը միշտ պետք է լինի ամենամաքուրը, ամենանորոգվածը, դա օրենք է»:

Նորոգման աշխատանքները կատարելիս հաշվի են առնվել



հիվանդությունների յուրահատկությունները, հատկապես՝ ապահով մեկուսացման անհրաժեշտությունը:

«Վերանորոգված բաժանմունքներում այսօր ունենք հիվանդասենյակների, աշխատասենյակների այնպիսի որակ, որը վերջապես համապատասխանում է վարակների կանխարգելման եւ բուժման ժամանակակից պահանջներին».

ասում է Արա Ասոյանը:

«Նորք» հանրապետական հիվանդանոցը տարեկան սպասարկում է տարաբնույթ վարակիչ հիվանդություններով տառապող ութ հազար հիվանդի: Այստեղ բուժում են ստանում ոչ միայն երեանի, Հայաստանի մարզերի բնակիչները, այլեւ հիվանդներ Լեռնային Ղարաբաղից եւ Վրաստանի հայաբնակ շրջաններից:



ՄՏՔԻ ԹԵԼԱԴՐԱՔՈՎ

Կապանի բժշկական կենտրոնի մանկական բաժանմունք

Սյունիքի մարզի Կապան քաղաքում հիմնովին նորոգվում է բժշկական կենտրոնի մանկական բաժանմունքը: Շուրջ կես դար առաջ կառուցված շենքն առողջապահության ժամանակակից չափանիշներին հարմարեցնելու համար կատարվում են նաեւ վերակառուցման եւ ամրացման աշխատանքներ:



«Հայաստան» Համահայկական Հիմնադրամի Մեծ Բրիտանիայի տեղական մարմինը վերջին տարիներին համայնքից ստացված նվիրատվություններն ուղղում է Հայաստանի առողջապահության ոլորտի զարգացմանը:

*«Մեր նվիրատուներն ու
բարերարներն այն կարծիքին
են, որ ազգի կենսունակության
համար ամենակարևորը
յուրաքանչյուր անհատի
առողջությունն է».*

ասում է Մեծ Բրիտանիայի տեղական մարմնի
ատենապետ Արմինե Կարապետին:



Հայաստանի հարավային սահմանից ոչ շատ հեռու գտնվող Կապան քաղաքում բրիտանահայերի նախաձեռնած ծրագիրը, որին հատկացվել է Կարապետ Նազարյանի կտակած 1 միլիոն դոլարը, ազգի կենսունակության պահպանմանն ուղղված կարեւորագույն քայլերից է:



ՊԱՐՏՔԻ ԹԵԼԱԴՐԱՔՈՎ

Մարտունու հիվանդանոց

«Հայաստան» Համահայկական Հիմնադրամի ԱՄՆ Արեւելյան շրջանի տեղական մարմնի եւ լեոնային Ղարաբաղի կառավարության համատեղ ֆինանսավորմամբ կառուցվում է Մարտունու քաղաքային հիվանդանոցի նոր շենքը:

Հին հիվանդանոցը ներկայում գործում է խարխուլ մի շինության մեջ եւ զուրկ է առողջապահական ծառայության համար անհրաժեշտ տարրական պայմաններից: Բուժհաստատության տնօրեն Գրիգորի Գասպարյանն ասում է, թե վատ պայմանների պատճառով Մարտունի քաղաքի եւ շրջանի մյուս բնակավայրերի հիվանդներից շատերն ախտորոշման կամ բուժման նպատակով գնում են Ստեփանակերտ՝ կտրելով շուրջ 60 կիլոմետր ճանապարհ:

Նորակառույց բուժհաստատության տանիքի ներքո կգործեն պոլիկլինիկան, ախտորոշիչ կենտրոնը, շտապ օգնության, վիրաբուժական, թերապեւտիկ բաժանմունքներն ու ծնարանը: Բուժսպասարկումը լիարժեք դարձնելու համար հիվանդանոցին կհատկացվի բժշկական ժամանակակից սարքավորումներ, իսկ անձնակազմի եւ տնօրինության համար կկազմակերպվեն վերապատրաստման եւ կառավարման դասընթացներ:

Սա «Հայաստան» Համահայկական Հիմնադրամի ԱՄՆ Արեւելյան շրջանի տեղական մարմնի երկրորդ խոշոր ծեռնարկն է Լեոնային Ղարաբաղի առողջապահության ոլորտում: Տարիներ առաջ ԱՄՆ Արեւելյան շրջանի հայության նվիրատվություններով կառուցվեց Ստեփանակերտի քաղաքային պոլիկլինիկան, որն իր հնարավորություններով եզակի է թե Լեոնային Ղարաբաղում եւ թե Հայաստանում:

Սարքավորումներ Վանքի հիվանդանոցին

«Հայաստան» Համահայկական Հիմնադրամի ԱՄՆ Արեւմտյան շրջանի տեղական մարմինը բժշկական սարքավորումներ է հատկացրել Լեոնային Ղարաբաղի Մարտակերտի շրջանի Վանք գյուղի հիվանդանոցին:



«Դրա պատճառը ոչ միայն հիվանդանոցի շենքային վատ պայմաններն են, այլեւ բժշկական սարքավորումների եւ մասնագետների պակասը».

բացատրում է Գրիգորի Գասպարյանը:



2009 թվականին «Հայաստան» Համահայկական Հիմնադրամի աշխարհասփյուռ կառույցների ուշադրությունը սեռեցված էր Շուշի քաղաքի հիմնախնդիրների վրա: Ամենուրեք կատարվում էին դրամահավաք միջոցառումներ, որոնց ամփոփումը՝ 16 միլիոն ամերիկյան դոլարի տպավորիչ արդյունքով, եղավ նոյեմբերի 26-ին Լուս Անջելեսում: Հարյուր հազարավոր հայերի նվիրատվություններով 2010-ին «Հայաստան» Հիմնադրամը Շուշիում արդեն իրականացնում էր փողոցների բարեկարգման, ջրամատակարարման ներքին ցանցի ստեղծման, դպրոցների եւ մշակութային հաստատությունների վերակառուցման, բնակելի շենքերի տանիքների նորոգման ավելի քան քսան ծրագրեր:



ՄԵՐ ՇՈՒՇԻՆ



ԲԱՐԵԿԱՐԳ ՓՈՂՈՑՆԵՐ

ԶՈՒՐ ՀԱՆԱՊԱԶՕՐՅԱ

«Անտանելի վիճակ է՝ ամեն տեղ փոսեր են, հնարավոր չէ երթելու: Եւ մեքենան ենք փչացնում, եւ մենք ենք չարչարվում: Եթե բարեկարգեն շատ լավ կլինի: Արդեն սկսել են եւ հույս ունենք, որ այս տարի կավարտեն».

ասում էր Շուշիի բնակիչ Գարիկ Միքայելյանը 2010 թվականի սկզբին, երբ մեկնարկում էր «Հայաստան» Համահայկական Հիմնադրամի «Մեր Շուշին» ծրագիրը:

Ծրագրում առանձնահատուկ տեղ էր հատկացված Շուշիի փողոցների բարեկարգմանը: Հեռուստամարաթոնի ավարտից անմիջապես հետո քաղաքի Արամ Մանուկյան եւ Նժդեհ փողոցներում շինարարական եռուզեռ էր: Շատ չանցած աշխատանքներ սկսվեցին նաեւ քաղաքի մուտքը հանդիսացող Ղազանչեցոց, Հախումյան եւ Պերճ Պողոջան փողոցներում: Դրանց երթելու մասն ու մայրերը նորոգելուց բացի նորացվել են նաեւ ներքին կոմունիկացիաները՝ ջրագծերը, կոյուղու եւ ջրահեռացման համակարգերը:

Ռուսաստանի հայ բարերարների նվիրատվություններով առաջին չորս փողոցների բարեկարգումն արդեն ավարտված է: Ներկայում աշխատանքներ են ընթանում Պերճ Պողոջան փողոցում, որի հիմնանորոգման ծրագիրը ստանձնել է Հիմնադրամի Մոնրեալի տեղական մարմինը:

«Զմեռանը նեղություններ շատ էինք քաշում, մեկ տարի առաջ ասում էր Շուշիի բնակիչ Անահիտ Եսայանը: «Ջուրը սառչում էր խողովակների մեջ, գնում էինք հեռու տեղերից, անգամ քաղաքից դուրս գտնվող աղբյուրներից ջուր էինք բերում»:

Այժմ իրավիճակը փոխվել է: Մինչ «Հայաստան» Հիմնադրամի համալիր ծրագրերի սկսվելը «Շուշիի վերածնունդ» կազմակերպությունը վերակառուցել էր քաղաքը սնուցող Թադեոսի ջրատարը, որը մյուս աղբյուրների հետ միասին լիովին ապահովում է խմելու ջրի պաշարը:

Խնդիրն, ինչպես ասում է, Շուշիի բնակիչ Վալերի Բաղդասարյանը, ջրի ծավալները չեն. «Մատակարարման ներքին ցանցը հնացած ու մաշված էր, դրա համար մարդիկ կանոնավոր ջուր չէին ստանում»:

Շուշին նվիրված հեռուստամարաթոնից անմիջապես հետո «Հայաստան» Համահայկական Հիմնադրամը Ռուսաստանի հայ բարերարների (գլխավոր բարերար՝ Սամվել Կարապետյան) նվիրաբերած միջոցներով սկսեց քաղաքի ջրամատակարարման ներքին ցանցի կառուցումը, ինչի շնորհիվ բնակիչները կունենան շուրջօրյա ջրամատակարարում:



ՆԱԽՆՅԱՅ ԱՎԱՆԴՈՒՅԹՈՎ

«Շուշիի զարգացումն անհնար է պատկերացնել առանց մշակութային օջախների, քանի որ Ղարաբաղի երկրորդ քաղաքը լինելուց բացի՝ այն նաև մշակութային մայրաքաղաքի համարում ունի».

ասում է Շուշիի բնակիչ Լիլիթ Գասպարյանը:

Տորոնտոյի հայության նվիրատվություններով հիմնովին նորոգվում է Շուշիի մշակույթի տունը: Խորհրդային տարիներին կառուցված շենքը, որը, կարելի է ասել, արդեն ի վիճակի չէր ծառայելու իր նպատակին, հիմնովին նորոգվելուց հետո կդառնա քաղաքի բնակիչների ժամանցի հիմնական վայրը: Մշակույթի տունն ունի ընդարձակ դահլիճ, որտեղ կցուցադրվեն ֆիլմեր, կանցկացվեն թատերական ու երաժշտական միջոցառումներ: Երեխաների և երիտասարդների համար մշակույթի տանը կգործեն խմբակներ:



ՎԱՂՎԱ ՀԱՄԱՐ

Շուշիի Ղազանչեցոց եկեղեցու հարեանությամբ է գտնվում Խաչատուր Աբովյանի անվան դպրոցը: Այն քաղաքի միջնակարգ երկու կրթօջախներից մեկն է: 88-ին ուսուցիչներն ու աշակերտները ստիպված տեղափոխվել են Ստեփանակերտ՝ սպասելու հարազատ քաղաքի ու հարազատ դպրոցի ազատագրմանը: 92-ին վերադարձել են, փորձել սեփական ուժերով վերականգնել Խորհրդային ժամանակներից ժառանգություն մնացած շենքը:

«-Արել ենք այն, ինչ կարողացել ենք,-ասում է Խաչատուր Աբովյանի անվան դպրոցի տնօրեն Նազիկ Նալբանդյանը: -Հիմնովին նորոգել չէինք կարող, ճիշտն ասած՝ չէինք էլ հավատում, թե մի օր նման հնարավորություն կլինի»:

Հնարավորությունը եղավ: 2009 թվականի հեռուստամարաթոնից հետո ի թիվս այլ ծրագրերի «Հայաստան» Համահայկական Հիմնադրամը ռուսահայ բարերարների նվիրատվությամբ սկսեց նաև Աբովյանի անվան դպրոցի շենքի նորոգումը:

«-Ամրացվում են պատերը, փոխվում են ներքին կոմունիկացիաները,-ասում է Նազիկ Նալբանդյանը: -Մեծ փոփոխություններ ենք ակնկալում եւ կարծում ենք, որ երեխաներն ավելի մեծ հաճույքով են սովորելու նոր պայմաններում»:

2009-ի հեռուստամարաթոնից անցել է մեկուկես տարի: Արտասովոր կարճ ժամանակահատված, անսպասելի մեծ ծավալներ, բայց արդեն սովորական դարձած տեմպ համահայկական մի կառույցի համար, որը ծառայում է զարգացմանն ու առաջընթացին:



ՆՈՐՈԳ ԳՐԱԴԱՐԱՆ

Շուշիի կենտրոնական գրադարանի շենքը հիմնովին նորոգվելուց հետո, կարելի է ասել, անճանաչելի է դարձել: «-Վերջին մեկ տարվա ընթացքում անսպասելի մեծ փոփոխություն տեղի ունեցավ, ասում է գրադարանի տնօրեն Ժասմին Գաբրիելյանը: Շենքն ամբողջությամբ նորոգվեց, կահույք տրամադրվեց, կատարված աշխատանքներից շատ գոհ ենք»:

ԱՄՆ Արեւմտյան շրջանի հայության միջոցներով վերակառուցված գրադարանն ունի անհրաժեշտ գույքով կահավորված գրապահոց եւ ընդարձակ ընթերցասրահ, որն ապագայում կհագեցվի նաեւ ժամանակակից համակարգչային տեխնիկայով: Գրադարանի տնօրեն Ժասմին Գաբրիելյանը վստահ է, որ կատարված փոփոխությունները նպաստելու են քաղաքի բնակչության եւ գրադարանի կապի սերտացմանը:

«-Այս հարմարությունները տեսնելով՝ հատկապես երեխաներն ու երիտասարդներն են կապվելու գրադարանի հետ, իսկ դա նշանակում է մշակութային կյանքի աշխուժացում ամբողջ քաղաքում».

ասում է Ժասմին Գաբրիելյանը:





ՆՈՐ ՏԱՆԻՔԻ ՏԱԿ

«-Շատ տհավոր վիճակ էր,-ասում է Շուշիի բնակիչ Լիդա Դավթյանը:-Երբ անձրևն կամ ձյուն էր գալիս, մեր տան պատերը թրջվում էին, չգիտեինք ինչ անենք, ինչպես պաշտպանվենք խոնավությունից»:

Վիճակն այսպիսին էր Շուշիի տասնմեկ բազմահարկ, բազմաբնակարան շենքերում, որոնց շուրջ 200 բնակիչներն ապրում էին անընդհատ խոնավության պայմաններում: Որոշ բնակարաններում կար նաեւ փլուզման վտանգ:

Այս մարդկանց հոգսը եւս տեղ գտավ «Հայաստան» Հիմնադրամի ծրագրում եւ 2010 թվականի ընթացքում Ռուսաստանի հայ բարերարների նվիրաբերած միջոցներով հիմնովին փոխվեցին շենքերի տանիքները:

ՉՈՐՍԸ ՄԵԿ ՇԵՆՔՈՒՄ

Շուշիի շրջանի Մեծ Շեն գյուղը, որտեղ ապրում է 118 մարդ, բազմաթիվ խնդիրներ ուներ՝ գյուղապետարանը տեղակայված էր խարխուլ մի շինության մեջ, բուժկետ, գրադարան եւ հանդիսությունների դահլիճ, կարելի է ասել, չկար:

«Հայաստան» Համահայկական Հիմնադրամը Լիբանանի հայության նվիրատվություններով նախաձեռնեց Մեծ Շենի համայնքային կենտրոնի նոր շենքի կառուցման ծրագիրը: Շուրջ 200 քառակուսի մետր ընդհանուր մակերեսով երկհարկանի շենքում այսուհետ գործելու են գյուղապետարանը, բուժկետը, գրադարանը եւ հանդիսությունների սրահը:

ՏԵԽՆԻԿԱՅԻ ՏՐԱՄԱԴՐՈՒՄ

Արգենտինայի հայության նվիրատվություններով Շուշիի քաղաքային տնտեսությունը համալրվել է ծյուն մաքրող տեխնիկայով: Քաղաքային հիվանդանոցին հատկացվել են շտապ օգնության մեքենաներ:



ԶՈՒՐ ԿՅԱՔ Է

Լեոնային Ղարաբաղի Հանրապետության ավելի քան 200 բնակավայրերում ջրի խնդիր կա: Այն ուղղակիորեն կամ անուղղակի ազդում է մարդկանց կենսագործունեության տարբեր ոլորտների վրա: Ղարաբաղի հազարավոր բնակիչներ հնարավոր ու անհնար միջոցներով ամեն օր կրում են այդ դժվարությունն ու երազում տանը ջուր ունենալու մասին: Մարդկանց այդ երազանքն իրականություն դարձնելու համար պետք է միայն ջրամատակարարման ենթակառուցվածքներ, որովհետեւ, ինչպես ասում են, ջուրը կա, ջրի ճամփան չկա:

Ջրային ռեսուրսների հարստությամբ Լեոնային Ղարաբաղն աշխարհում առաջիններից է: Ստորգետնյա պաշարները չհաշված՝ մեկ շնչին այստեղ տարեկան բաժին է ընկնում 19000 խորանարդ մետր ջուր, բայց մատակարարման համակարգերի մաշվածությունը կամ բացակայությունը թույլ չեն տալիս, որպեսզի մարդն օգտվի բնության այդ բարիքից:

2010 թվականին «Հայաստան» Համահայկական Հիմնադրամը ջրային ենթակառուցվածքների ստեղծման եւ նորացման ծրագրեր է իրականացրել Լեոնային Ղարաբաղի Ասկերան եւ Մարտունի շրջաններում, իսկ հեռուստամարաթոնից անմիջապես հետո աշխատանքներ են սկսվել Ստեփանակերտ, Մարտունի, Բերձոր, Մարտակերտ քաղաքներում:



ՆՈՐԱԳՅՈՒՂՈՒՄ ԳՈՐ ԵՆ ՈՒ ԲԱՎԱՐԱՐՎԱԾ

Նորագյուղն Ասկերանի շրջանի ամենամեծ համայնքն է: Ունի 1510 բնակիչ, որոնք ենթակառուցվածքների անբավարար վիճակի պատճառով ջուր ստանում էին օրական ընդամենը երկու ժամ: Գյուղացիների կենցաղը բարելավելու նպատակով «Հայաստան» Հիմնադրամն այստեղ կառուցել է հինգ կիլոմետր երկարությամբ ջրագիծ եւ նորոգել օրական կարգավորման ջրամբարները:

«Հիմա արդեն հինգ ժամով ջուր են մատակարարում, ժողովուրդը շատ գոհ է այս ծրագրից».

ասում է Նորագյուղի բնակիչ Վանյա Պետրոսյանն ու շնորհակալություն հայտնում Ֆրանսիայի եւ Ռուսաստանի հայ բարերարներին՝ իրենց համայնքին օգնելու համար:

ԱՎԵՏԱՐԱՆՈՑՈՒՄ ԷԼ ԶՈՒՐ ԿՍՏԱՆԱ

«Հայաստան» Համահայկական Հիմնադրամի Ֆրանսիայի տեղական մարմնի եւ Լեոնային Ղարաբաղի կառավարության համատեղ ֆինանսավորմամբ սկսվել է Ասկերանի շրջանի Ավետարանոց գյուղի ջրամատակարարման համակարգի կառուցումը: Ծրագիրն իրականացվում է երկու փուլով: Առաջին փուլով նախատեսվում է գյուղից 5 կիլոմետր հեռավորությամբ գտնվող Զիրս սարի ստորոտում ստեղծել ջրահավաք ավազաններ, անցկացնել խողովակաշար եւ գյուղի մերձակայքում կառուցել օրական կարգավորման ջրամբար: Երկրորդ փուլով կստեղծվի 15 կիլոմետր երկարությամբ ներքին ցանց, կտեղադրվեն զտիչ սարքեր եւ ջրաչափեր: 2011 թվականի ամռանը Ավետարանոցի 260 ընտանիքները (շուրջ 1130 բնակիչ) կունենան կանոնավոր ջրամատակարարում:





ՍՈՍՈՒՄ ՈՒՐԱՆ ԵՆ ԵՒ ԶԱՐՄԱՑԱԾ

Մարտոնու շրջանի Սոս գյուղում կառուցվել է 7.6 կիլոմետր երկարությամբ ներքին ցանց: Նորոգվել են օրական կարգավորման ջրամբարները: Սոսի համայնքի ղեկավար Վիգեն Ղահրամանյանն ասում է, թե 300 տարվա պատմություն ունեցող գյուղում երբեմն նման բան չի եղել:

«-Մեր գյուղի տներում խմելու ջուր ընդհանրապես չի եղել,- ասում է համայնքի ղեկավարը:- Տարբեր տեղերում ունեինք երեք աղբյուր, որոնցից էլ մարդիկ օգտվում էին՝ դուլներով կամ այլ տարողություններով ջուրը տուն հասցնում»:

«Հայաստան» Հիմնադրամի Ֆրանսիայի տեղական մարմնի եւ Լեոնային Ղարաբաղի կառավարության համատեղ ֆինանսավորմամբ կառուցված ներքին ցանցն այսօր արդեն ապահովում է շուրջօրյա ջրամատակարարում: Համայնքի ղեկավար Վիգեն Ղահրամանյանն ասում է, թե գյուղացիներն ուրախ են եւ միաժամանակ զարմացած: Ուրախ են, որովհետեւ տներում ջուր կա եւ զարմացած, քանզի արդեն չէին հավատում, թե նման բան հնարավոր է:

ԳՈՐԾԸ ԿԻՍԱՏ ԶՄՆԱՅ

Ֆրանսիայի հայության եւ Ղարաբաղի կառավարության համատեղ ֆինանսավորմամբ Ասկերան քաղաքում կառուցվել է ջրամատակարարման ներքին ցանց: Սա «Հայաստան» Հիմնադրամի երկրորդ ծրագիրն է Ասկերանում: 1995-ին կառուցվել էր յոթ կիլոմետր երկարությամբ ջրագիծ, որն ապահովում է քաղաքի օրական պահանջը:

Ասկերանի շրջանի վարչակազմի ղեկավար Վահրամ Բաղդասարյանն ասում է, որ նորակառույց ցանցը քաղաքի ջրամատակարարումը շուրջօրյա դարձնելու հնարավորություն է տալիս:

«Կորուստները նվազեցված են, կառավարման համակարգը՝ բարելավված, ինչը թույլ է տալիս առանց խափանումների սպասարկել շուրջ 3000 բնակչի»:

ասում է վարչակազմի ղեկավարը:



ՀԱՅ-ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ԲԱՐԵԿԱՄՈՒԹՅԱՆ ՋՐԱՑՔ

Ֆրանսիայի Օ դը Սեն շրջանի ընդհանուր խորհրդի ֆինանսավորմամբ Տավուշի մարզում վերագործարկվել է Իջեանի մայր ջրանցքը, որն այսօր ոռոգում է Խաշթառակ, Լուսահովիտ եւ Դիտական գյուղերի ավելի քան 650 հեկտար հողատարածք:

Խորհրդային տարիներին կառուցված ջրանցքը ժամանակի ընթացքում շարքից դուրս էր եկել եւ չէր ծառայում նպատակին: Ֆրանսիացիների նվիրատվությամբ հնարավոր եղավ նորոգել քիչ թե շատ պիտանի հատվածները, որոշ մասերում ամբողջովին նորացնել, աշխատանքային վիճակի բերել պոմպակայանն ու կառուցել մոլիչ ցանց:

Ի պատիվ ֆրանսիացի բարեկամների՝ այն կոչվեց «Հայ-ֆրանսիական բարեկամության» ջրանցք, իսկ բացման արարողությունն իրենց ներկայությամբ պատվեցին Ֆրանսիայի Օ դը Սեն շրջանի ընդհանուր խորհրդի նախագահ Պատրիկ Դեեյանը, խորհրդի անդամ Պատրիկ Ալեքսանյանը, Հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի անդամ, Ֆրանսիայի տեղական մարմնի նախագահ Պետրոս Թերգյանը:

«-Ընդհանուր խորհրդի ժողովում այս ծրագիրն անցել է միահամուռ որոշումով, դրան կողմ է քվեարկել անգամ ընդդիմությունը, -ասաց Պատրիկ Դեեյանը: -Այսինքն՝ ընդհանուր կարծիք է, որ բոլոր հայերը պետք է կարողանան արժանապատվորեն ապրել իրենց հողի վրա: Իսկ արժանապատիվ ապրել նշանակում է կարողանալ ստանալ հողի բարիքը»:

Մինչ Աղստե գետի ջուրը նորաբաց ջրանցքով հասնում էր բացման արարողության վայր, ներկաներին դիմեց նաեւ «Հայաստան» Հիմնադրամի հոգաբարձու, Ֆրանսիայի տեղական մարմնի նախագահ Պետրոս Թերգյանը.

«Հիմա ձեզ մնում է միայն այս հողի վրա աշխատել, որպեսզի զալ անգամ որ այցելենք, հողի պտուղներն ու բերքը տեսնենք արդեն»:

Հայ-ֆրանսիական բարեկամության ջրանցքը բացվեց: Բացվեց նաեւ ջրի ճամփան եւ անմշակ մնացած հողը հագեցրեց տարիների ծարավը:

Ամիսներ անց Տավուշի մարզ այցելեց Ֆրանսիայի Օ դը Սեն շրջանի գլխավոր խորհրդի փոխնախագահ Ժան Պոլ Դովայի ղեկավարած պատվիրակությունը: Ծանոթանալով կատարված աշխատանքին՝ ֆրանսիացի պաշտոնյան ասաց. «Մենք աշխատում ենք չորս մայրցամաքների չորս երկրների հետ: Զարգացման ծրագրեր ենք իրականացնում՝ նպատակ ունենալով վերացնել աղքատությունը: Եւ այդ իմաստով կարելի էր ջրի հետ կապված ենթակառուցվածքների ստեղծումն ու զարգացումը»:

«Հայ-ֆրանսիական» ջրանցքի վերագործարկմամբ ջրի խնդիրը լուծված համարելով՝ Տավուշի ֆրանսիացի բարեկամները ձեռնարկել են նաեւ մեքենատրակտորային կայանների եւ տնկարանների ստեղծման ծրագրեր, որոնք անպայման դրական ազդեցություն են ունենալու մարզի տնտեսության զարգացման վրա:



ԴԻՏԱՎԱՆԸ ԴԱՌՆՈՒՄ Է ՀՄԱՅԻՉ

Տներում ու բակերում հոսող սառնորակ ջրի եւ իրենց կյանքում եղած այլ փոփոխությունների համար Տավուշի մարզի Դիտավան գյուղի բնակիչներն օրինում են արգենտինահայ էքսերճիէանների ընտանիքին, ում բարերարությունը զարմանք եւ հիացմունք է պատճառում:

«-Զարմացած ենք մնացել, - ասում է Դիտավանի բնակիչ Սաշա Բաննահյանը: - Եթե բարերարը չգար, եթե այդ ներդրումը չլիներ, մենք ոչ զազ կունենայինք, ոչ ջուր, ոչ էլ համայնքային նոր կենտրոն, քանի որ Դիտավանը փոքր գյուղ է, իսկ փոքր գյուղերը միշտ վերջինն են արժանանում ուշադրության»:

Դիտավանի բնակիչ, ինժեներ-երկրաբան Հրաչ Ալիխանյանի խոսքով՝ գյուղում խմելու ջրի խնդիրը կապված է եղել միայն ցանցի մաշվածության հետ: «Լավ աղբյուրներ ունենք, բայց խողովակների հնության պատճառով ջուրը կորչում էր, - ասում է Ալիխանյանը: - Հիմա, փառք Աստծո, ցանցը կարգի բերվեց եւ արդեն շուրջօրյա ջրամատակարարում կա»:

«Հայաստան» Համահայկական Հիմնադրամի իրականացրած թե ջրամատակարարման, թե մյուս ծրագրերը Դիտավանի զարգացման խթան են լինելու եւ կանխելու են արտագաղթը:

«-Երիտասարդներն արդեն կամաց-կամաց գնում էին գյուղից, - ասում է Սաշա Բաննահյանը, - հիմա տեսնում են, որ ապրելու պայմաններն օր-օրի լավանում են եւ ապագան կապում են հայրենի գյուղի հետ»:

ՎԱԶԱՇԵՆ, ԱՅԳԵՀՈՎԻՏ

«Հայաստան» Համահայկական Հիմնադրամի Ֆրանսիայի տեղական մարմնի եւ արգենտինահայ բարերար Գրիգոր Շիմշիրոլյուի նվիրատվությամբ կառուցվել է Տավուշի մարզի Վազաշեն եւ Այգեհովիտ գյուղերի ոռոգման համակարգը:

Տավուշի մարզպետարանի գյուղատնտեսության եւ բնապահպանության վարչության պետ Ռազմիկ Մելիքջանյանի խոսքով՝ իրականացված ծրագիրը շատ կարեւոր է սահմանամերձ այս գյուղերի պահպանման եւ զարգացման տեսակետից:

«-Ստեղծվել է մի ենթակառուցվածք, որն առաջին հերթին հույս է տալիս գյուղացիներին: իսկ այդ հույսն ամրացնում է մարդու եւ հողի կապը, հնարավորություն է տալիս ապրելու ոչ միայն պսփով, այլեւ վաղվա, ապագայի ծրագրերով՝ այգիներ հիմնել, բանջարանոցներ ստեղծել, աշխատել ու բարիք ստանալ».

ասում է Մելիքջանյանը:



Ո՛Վ Է ՊԱՀՈՒՄ ԳՅՈՒՂԸ

Սյունիքի մարզի Նոնաձոր գյուղում իրանահայ համայնքի ֆինանսավորմամբ կառուցվել է ջրամատակարարման համակարգ՝ 4.3 կիլոմետր երկարությամբ խողովակաշար, երկու ջրամբար, պոմպակայան եւ բաշխման ներքին ցանց:

Նոնաձորը գտնվում է Հայաստանի ծայր հարավում՝ Իրան-Հայաստան սահմանի մոտ: Երեւանից հեռու է շուրջ 450 կիլոմետր: Գյուղում ապրում է հիսուն ընտանիք:

Թեհրանի հայոց թեմի թեմական խորհրդի ատենապետ Աիդա Ավանեսյանը գտնում է, որ սահմանամերձ գյուղերում ամենամեծ գործն անում են հենց իրենք՝ բնակիչները, ապրելով ու պաշտպանելով երկրի սահմանները:

«-Իսկ մենք, երբ մի աշխատանք ենք անում, պարզապես մեր պարտքն ենք տալիս, եւ սա էլ մի բաժինն է այն պարտքի, որ զգում ենք՝ Հայաստանից հեռու ապրելով».
ասում է տիկին Աիդան:



լինելով
ով
յան



